ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 29

# ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ ֆինանսների և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

2. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է՝ ֆինանսների և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

3. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը /

4. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը /

5. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   ---

   /Հարցը ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը /

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 30

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, 61-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Իրազեկել Արարատ քաղաքային համայնքի 2019թ. բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների կատարման հաշվետվությունը: Արարատ քաղաքային համայնքի 2019թ. բյուջեի եկամուտների պլանը կազմել է 142092,5 հազ. դրամ, որը կատարվել է 151272,6 հազ. դրամով կամ 106,5%-ով: Այն ըստ հարկատեսակների ունի հետևյալ տեսքը. հազ. դրամ

| | Առաջին եռամսյակ | | |
|---|---|---|---|
| | Պլան | Փաստացի | Կատարողական% |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1.Գույքահարկի ն/թ | 10500,0 | 18960,2 | 180,6 |
| իրավաբանական | 3500,0 | 6072,3 | 173,5 |
| ֆիզիկական | 7000,0 | 12887,9 | 184,1 |
| 2.Հողի հարկ ն/թ | 850,0 | 538,3 | 63,3 |
| իրավաբանական | 550,0 | 359,1 | 65,3 |
| ֆիզիկական | 300,0 | 179,2 | 59,7 |
| 3.Պետ տուրքեր ն/թ | 1625,0 | 1855,7 | 114,2 |
| Նոտար | 1250,0 | 1655,7 | 132,4 |
| ՔԿԱԳ | 375,0 | 200,0 | 53,3 |
| 4.Վարձակալություն ն/թ | 1150,0 | 1254,4 | 109,1 |
| Գույքի վարձ | 150,0 | 257,0 | 171,3 |
| Հողի վարձ | 1000,0 | 997,4 | 99,7 |
| 5.Տեղական տուրք ն/թ | 2470,0 | 2356,2 | 95,4 |
| Քանդելու թույլտվություն | --- | 13,0 | --- |
| Վերակառուցելու թույլտվություն | --- | --- | --- |
| Շինարարության թույլտվություն | 15,0 | 15,0 | 100,0 |
| Թույլտվություն համայնքի տարածքում ժամը 2400-ից հետո շահումային խաղերի կազմակերպման | 200,0 | 200,0 | 100,0 |
| Ոգելից խմիչք և ծխախոտի թույլտվ. | 500,0 | 698,0 | 139,6 |
| Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվ. | 440,0 | 100,0 | 22,7 |
| Տեխնիկական հեղուկների մանրածախ վաճառքի թույլտվ. | --- | --- | --- |

| | | | |
|---|---|---|---|
| Բացօթյա վաճառք | 50,0 | 81,0 | 162,0 |
| Արտաքին գովազդ | 850,0 | 866,8 | 102,0 |
| Տաքսի ծառայություն | -- | --- | --- |
| Թանկարժեք մետաղներ | 200,0 | 200,0 | 100,0 |
| Հանրային սնունդ | 40,0 | 50,5 | 126,2 |
| 6.Արխիվից փաստաթղթերի տրամադրում | 145,0 | 131,9 | 91,0 |
| 7.Վարչական գանձումներ | 9000,0 | 13588,5 | 151,0 |
| 8.Դոտացիա | 102504,1 | 102504,1 | 100,0 |
| 9.Սուբվենցիա ժող. գործիք | 623,6 | 623,6 | 100,0 |
| 10.Սուբվենցիա բնապահպանական | 1000,0 | --- | --- |
| 11.Պատվիրակված ծառայություններ ն/թ | 3439,6 | 2364,8 | 68,7 |
| ՔԿԱԳ | 1074,8 | ---- | --- |
| ՍԱԱՏԲ | 2364,8 | 2364,6 | 100,0 |
| 12.Տեղական վճար | 6930,0 | 4731,5 | 68,3 |
| 13.Մուտքեր օտարումից | 2000,0 | 2495,5 | 124,8 |
| Ընդամենը՝ | 142092,5 | 151272,6 | 106,5 |
| Հատկացում վ/բ-ից ֆ/բ | | | |

2019թ. համայնքի բյուջեի առաջին եռամսյակի ծախսային պլանը կազմում է 243325,6 հազ. դրամ, այն կատարվել է 116667,0 հազ. դրամով կամ 47,9 %-ով:

Ըստ ծրագրի բյուջեի ծախսային մասի կատարման արդյունքներն են.

| Ծախսերն ըստ ծրագրերի | Առաջին եռամսյակ | | |
|---|---|---|---|
| | Պլան | Փաստացի | Կատարողական% |
| 2 | 3 | 4 | 5 |
| Տեղական ինքնակառավարում 0111.51 | 30620,0 | 19205,0 | 62,7 |
| Ընդ. բնույթի այլ ծառ. 0131.51 | 1854,0 | --- | --- |
| Ընդ. բնույթի հանրային ծառ. 0161.52 | 650,0 | 192,0 | 29,5 |
| Ճանապարհային տրանսպ. 0451.51 | 44814,9 | --- | --- |
| Բակային տարածքների և խաղահրապարակ բարեկարգ. 0661.53 | 5300,0 | --- | --- |
| Փողոցների լուսավորում 0641.55 | 6100,0 | 4329,9 | 71,0 |
| Բնակ. շին. և կոմ. ծառ. 0661.51 | 40429,0 | 25898,7 | 64,0 |
| Մշակույթ. տներ, ակումբներ, կենտրոններ 0823.51 | 10100,0 | 6371,4 | 63,1 |
| Նախադպրոցական կրթություն 0911.51 | 44780,0 | 20183,0 | 45,1 |
| Կարիք. ընտ միջ. մաս. կրթ. ստացող 0932.55 | 350,0 | 95,0 | 27,1 |
| Կարիք ընտ բարձր. Կրթ. Ստացող 0941.55 | 1000,0 | 730,0 | 73,0 |
| Արտադպրոցական դաստիրակ 0951.51 | 31930,.0 | 23988,0 | 75,1 |
| Սոց. անապ. անձ. աջակց. 1071.54 | 2500,0 | 1615,0 | 64,6 |
| Սոցիալական պաշտպ./այլ դաս. Չպատկանող ՍԱԱՏԲ 1091.51 | 3180,0 | 1967,7 | 61,9 |
| Հանգիստ, մշակույթ կրոն 0851.55 | 2400,0 | 797,8 | 33,2 |
| Կրթ. տրամադր. օժ. ծառայություն 0961.52 | 1500,0 | --- | --- |
| Հրատարակչություն 0832,55 | 200,0 | --- | --- |
| Սպորտային միջոցառումներ 0811.51 | 300,0 | 134,5 | 44,8 |
| Ռազմական պաշտպանություն 0211.51 | 200,0 | --- | --- |
| Ռոզման ցանցի կառուցում 0424.51 | 3177,7 | --- | --- |
| Հեռուստատեսություն 0831.51 | 100,0 | --- | --- |
| Ջրամատակարարում 0631.51 | 11840,0 | 11159,0 | 94,2 |

| | | | |
|---|---|---|---|
| **Ընդամենը՝** | **243325,6** | **116667,0** | **47,9** |

Ընդունել ի գիտություն:

**ԿՈՂՄ (8)**

**ավագանու անդամներ՝**

1. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ
## <<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 31-Ն

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հասարակական աշխատանքների իրականացում» ծրագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Արարատ քաղաքային համայնքին տրամադրվելիք 1500,0 հազ. դրամը, ավելացրած 150,0 հազ. դրամը որպես համայնքի ներդրում՝ ընդհանուր գումարով 1650,0 հազ. դրամ դրամաշնորհը, որը նախատեսված է 03.06.2019թ. մինչև 28.06.2019թ. ընկած ժամանակահատվածում Արարատ քաղաքի փողոցների բարեկարգման նպատակով կատարվելիք աշխատանքների համար 12 աշխատողների 20 օրվա կտրվածքով հատկացվելու է 1200,0 հազ. դրամ աշխատավարձ, իսկ աշխատանքային գործիքների ձեռքբերման համար՝ 450,0 հազ. դրամ, որից 150,0 հազ. դրամը որպես համայնքին ներդրում ֆինանսավորվելու է կոմունալ ծառայության աշխատավարձի ֆոնդի տնտեսումներից: Միաժամանակ ս/թ հունիս ամսին Մոսկվայում կայանալիք «Երջանկություն» միջազգային փառատոնի Գալա համերգին մասնակցելու նպատակով Արարատ քաղաքի երաժշտական դպրոցից երկու հոգու Մոսկվա քաղաք գործուղելու համար տոմսեր ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև 2019թ. բնապահպանական ծրագրով ոռոգման ցանցի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման նպատակով, ճանապարհային անվտանգության նշանների ձեռքբերման համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետերի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2019թ. բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածների հետևյալ փոփոխությունները .

1. Ավելացնել համայնքի 2019թ. բյուջեի եկամուտները 1500,0 հազ.դրամ՝ սահմանելով համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները 628660,872.1 հազ. դրամ: Ն/թ ավելացնել համայնքի բյուջեի եկամուտները «Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված» մասով 1500,0 հազ.դրամ, սահմանելով վերջինիս եկամուտների պլանը 1720,0 հազ. դրամ:
2. Պակասեցնել՝ համայնքի բյուջեի 1112.51 «Պահուստային ֆոնդեր» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդեր» հոդվածը 260,0 հազ. դրամ: Սահմանել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը 3607,2 հազ. դրամ:
3. Պակասեցնել՝ 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 250,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 43064,972.1 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 44564,972.1 հազ. դրամ,
4. Ավելացնել՝ 0951.51 «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածը 260,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը

100770,0 հազ.: Ն/թ ավելացնել «Արարատ քաղաքի Ղազարոս Սարյանի անվան ՄՄԱԴ» ՀՈԱԿ-ի դրամաշնորհի գումարը 260,0 հազ. դրամ: Սահմանել նրա պայմանագրային դրամաշնորհի ընդհանուր գումարը 51760,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ընդհանուր ծախսային պլանը 100770,0 հազ. դրամ:

5. Պակասեցնել՝ 0661.51 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ծրագրի 4111 «Աշխատավարձ» հոդվածը 150,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 103078,0 հազ. դրամ:
6. Ավելացնել՝
   ա) 0661.51 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ծրագրի 4111 «Աշխատավարձ» հոդվածը 1200,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 104278,0 հազ. դրամ,
   բ) ավելացնել նույն ծրագրի 4267 «Կենցաղային ապրանքներ» հոդվածը 450,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 1350,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 137312,0 հազ. դրամ: Սահմանել համայնքի բյուջեի ընդհանուր ծախսային պլանը 628660,872.5 հազ. դրամ:
7. Ավելացնել՝՝
   0424.51 «Ոռոգման ցանցի կառուցում և վերակառուցում» ծրագրի 5134 «Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 150,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային և ծրագրի պլանը 150,0 հազ. դրամ:
8. Ավելացնել՝՝
   0451.59 «Փողոցների պահպանում և շահագործում» ծրագրի 5129 «Այլ սարքեր և սարքավորումներ» հոդվածը 100,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային և ծրագրի պլանը 900,0 հազ. դրամ:
9. Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվ և ժամանակացույց:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 32

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատ քաղաքային համայնքի ավագանու 2017թ.-ի դեկտեմբերի 15-ի N 50 որոշմամբ Արարատի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկի 4/չորս/ սենյակները վարձակալությամբ տրամադրվել է «Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամի Արարատի մարզային կառույց»-ին: Սակայն 2019թ.- ի ապրիլ ամսից այն վերակազմավորվել է «Գիտության և խորհրդատվության վարչության Արարատի խորհրդատվության բաժին», ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կայացնել վարձակալության տրամադրման նոր որոշում և կնքել նոր պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկի 4/չորս/ սենյակները՝ ընդհանուր 61 /վաթսունմեկ/ քմ մակերեսով, վարձակալությամբ տրամադրվել «Գիտության և խորհրդատվության վարչության Արարատի խորհրդատվության բաժնին»:
Վարձավճարի չափը սահմանել տարեկան 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ԿՈՂՄ (8)

**ավագանու անդամներ՝**

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ
## <<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 33

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատի համայնքապետարան է դիմել քաղաքացի Արայիկ Ռազմիկի Մակարյանը խնդրանքով, որ Արարատ քաղաքի «Այգի 1» հասցեում գտնվող քաղաքային կարուսելը յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը վարձակալությամբ տրամադրվի իրեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատ քաղաքի «Այգի 1» հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող կարուսելը 2019 թ-ի հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը վարձակալությամբ տրամադրել Արայիկ Մակարյանին:
   Վարձավճարի չափը սահմանել ամսեկան 20,000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ վարձակալության պայմանագիրը կնքել վարձակալի կողմից կարուսելի շահագործման վերաբերյալ ԱԻՆ –ի կողմից տրված դրական եզրակացություն ներկայացնելու դեպքում:

ԿՈՂՄ (5)

ավագանու անդամներ՝

1. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
2. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
3. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԴԵՄ ( 3)

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

3. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## <<24>> ՄԱՅԻՍ 2019 թվականի N 34

## ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատ քաղաքային համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և համայնքի բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, կատարման և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար, համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածով

### ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել Արարատ քաղաքային համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով.

1.1 Հայկ Հայկյան – համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ
1.2 Լևոն Հովհաննիսյան – համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և գանձումների բաժնի պետ, խորհրդի նախագահի տեղակալ
1.3 Արմեն Մարտիրոսյան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և գանձումների բաժնի գլխավոր մասնագետ, խորհրդի քարտուղար
1.4 Արսեն Հակոբյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
1.5 Զինա Հովհաննիսյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
1.6 Գոհարիկ Հովհաննիսյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
1.7 Վահե Հարությունյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
1.8 Հայկանուշ Հովհաննիսյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդի գործունեությունն իրականացնել համայնքի ավագանու 2016թ. հունիսի 7-ի «Համայնքի ղեկավարին կից Արարատ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 16 որոշմամբ սահմանված կարգով:

ԿՈՂՄ (8)

**ավագանու անդամներ՝**

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

3. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ ____________

4. ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ____________

5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

6. ՋԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ____________

8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ